Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 12 (512) հուլիս 1-17, 2022թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խստիվ դատապարտում ենք Մուրադ Փափազյանի հանդեպ կիրառված ապօրինի քայլը

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը

Հայաստանի ապազգային իշխանությունների՝ սահմաններ չճանաչող անհանդուրժողականությունը նորանոր դրսեւորումներ է ստանում: Այս գիշեր, առանց բացատրության ու հիմնավորման, արգելվել է ՀՅԴ Բյուրոյի անդամ, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ Մուրադ Փափազյանի մուտքը Հայաստան:

Հայաստանի, Արցախի եւ Հայ դատի համար տասնամյակներ պայքարած ազգային գործչի նկատմամբ նման վերաբերմունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ քինախնդիր, փոքրոգի քայլ եւ թշնամուն հաճոյանալու պարզունակ դրսեւորում:

Համոզված ենք, որ Ֆրանսիայի Հանրապետության Ազգային տոնի՝ Բաստիլի գրավման օրը Ֆրանսիայում ճանաչված եւ հարգված հայազգի քաղաքացու ազատ տեղաշարժվելու իրավունքի կոպիտ ոտնահարումը պատշաճ գնահատական կստանա նաեւ ֆրանսիական իշխանությունների կողմից:

Ցավալիորեն հատկանշական է, որ Թուրքիայում եւ Ադրբեջանում անցանկալի անձ հայտարարված Մուրադ Փափազյանը հիմա արդեն անցանկալի անձ է փաշինյանական իշխանությունների համար: Ազգային գործիչներին թիրախավորելու եւ սփյուռքահայերին Հայաստանից օտարելու փաշինյանական ծանոթ ձեռագիրն է:

Սա հարված է համահայկականության գաղափարի իրականացման ճիգին, ժողովրդավարության լուրջ նահանջ է Հայաստանում եւ բռնապետության հաստատման ակնհայտ դրսեւորում:

Խստիվ դատապարտում ենք Մուրադ Փափազյանի հանդեպ կիրառված ապօրինի քայլը, որն առանց պատշաճ բացատրության եւ վերանայման չի կարող մնալ:

Դաշնակցականների նկատմամբ սանձազերծված հալածանքների նորօրյա դրսեւորումները՝ ձերբակալությունները, կալանավորումները, պաշտոնազրկումները, տարատեսակ ապօրինությունները, ըստ էության, քողազերծում են հայության դեմ ուղղված ազգադավ ծրագրերը: Դրանք որեւէ կերպ չեն կարող հետ պահել մեզ պայքարի մեր ուղուց:

Թուրք-ադրբեջանական տանդեմի շահերը սպասարկող փաշինյանական վարչախումբն ի վերջո ինքնաբացահայտվելու եւ գտնելու է իր վախճանը:

ՀՅԴ Բյուրո
14 հուլիսի, 2022 թ.



Այս վարքագիծը այլ բան չէ, քան հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի դեմ ուղղված քայլ

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունը

ՀՅԴ Արցախի կառույցի անունից դատապարտում ենք փաշինյանական վարչախմբի կողմից ՀՅԴ Բյուրոյի անդամ, Ֆրանսահայ կազմակերպությունների խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանի՝ Հայաստանի Հանրապետություն մուտքի արգելումը:

Ապազգային այս վարքագիծը այլ բան չէ, քան հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի դեմ ուղղված քայլ եւ ուղղակի աջակցություն թուրք-ադրբեջանական հայակործան քաղաքականությանը:

Ընկեր Մուրադ Փափազյանն իր գիտակցական ամբողջ կյանքը նվիրել է Հայ դատի ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Դաշնակցական գործիչը, Դաշնակցության ավանդույթներին համահունչ, քիչ է բարձրաձայնում արածի մասին: Անշուշտ, պատմությունը կվկայի նրա՝ անսակարկ նվիրումի արդյունքում ունեցած ազդեցիկ դերակատարությունը հայ ժողովրդին ի նպաստ արձանագրված հաղթանակների շարքում:

Այդ առումով Մուրադ Փափազյանը մեծ դեր է ունեցել հայ-ֆրանսիական հարաբերությունների, Ֆրանսիայի տարբեր ատյաններում Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման, ինչպես նաեւ Արցախյան հիմնահարցի ուղղությամբ Ֆրանսիայի հայանպաստ դիրքորոշումների արձանագրման աշխատանքներում:

Արցախի քաղաքական դաշտում միշտ կարեւորվել է եռամիասնության գաղափարը: Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունն այն կարեւոր կռվանն է, որի վրա հենվելով՝ հայ ժողովուրդը հնարավորություն ունի բազմապատկելու իր ներուժը եւ արդյունավորելու ազգային իդեալների ուղղությամբ տարվող պայքարը: Փաշինյանի կողմից Սփյուռքի հանդեպ տարվող քաղաքականությունը հարված է այդ եռամիասնությանը: Մուրադ Փափազյանը, լինելով Ֆրանսահայ կազմակերպությունների խորհրդի համանախագահ, մեծ հեղինակություն է վայելում Եվրոպայի ամենամեծ հայկական համայնքում:

Ազգային միասնությանը հարվածող, թրքահաճո ուղղություն որդեգրած՝ Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունն ապացույցն է ապազգային մտայնության եւ շարունակությունն է պարտվողի հոգեբանական բարդույթի:

Համոզված ենք, որ Արցախյան 2020թ. պատերազմի հետեւանքով վիրավոր Արցախի ապաքինումը հնարավոր կլինի ազգային արժեքների եւ միասնության վեհ գաղափարը կրող իշխանության առկայության դեպքում:

Կոչ ենք անում վերանայել Մուրադ Փափազյանի դեմ կամայական, ապօրինի կեցվածքը եւ չխորացնել հայ ժողովրդի տարբեր հատվածների մեջ խրված պառակտման սեպը:

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտե
15.07.2022թ.

Դաշնակցության համար ընդունելի չէ Արցախի իրավունքներից որեւէ նահանջ

Հուլիսի 12-14-ը Արցախում էր ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը: Արցախ այցելության առաքելությունը հիմնականում երկու ուղղությամբ էր. նախ՝ քաղաքական հանդիպումներ Արցախի պետական տարբեր օղակների հետ Արցախի կացութեյան, հիմնահարցի եւ օժանդակության կապակցությամբ, եւ ապա՝ ներքին կազմակերպական հարցեր, որը ներառում էր ԿԿ-ի հետ որոշ աշխատանքների ծրագրում, հանդիպումներ ՀՅԴ շարքերի հետ:

Այցի ընթացքում ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը հանդիպումներ է ունեցել Արցախի Հանրապետության նախագահի, պետական նախարարի, արտաքին գործերի նախարարի, Անվտանգության խորհրդի քարտուղարի, մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաեւ ԱՀ խորհրդարանում ներկայացված քաղաքական գործընկեր ուժերի առաջնորդների հետ:

Արցախի իշխանության ներկայացուցիչների հետ քննարկվել են Արցախի հարցով ՀՀ-ի կողմից վարվող բանակցությունների վերաբերյալ Արցախի տեսակետը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունները եւ Հայաստան-Ադրբեջան սահմանազատման ու սահմանագծման խնդիրները, որոնք սերտորեն առնչվում են Արցախի կարգավիճակի հետ:

Այցի ընթացքի, արդյունքների, Հայաստանի եւ Արցախի ներքին ու արտաքին քաղաքական մի շարք հարցերի շուրջ «Ապառաժ»-ը հարցազրույց է ունեցել ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցչի հետ:

→ 2

Դաշնակցության համար ընդունելի չէ Արցախի իրավունքներից որեւէ նահանջ

1 ← ***- Դուք պարբերաբար այցելում եք Արցախ: Ի՞նչ արդյունքներ արձանագրվեցին Ձեր վերջին այցի ընթացքում:***

- Արցախում իշխանության օղակների հետ քննարկեցինք Արցախի ներկա իրավիճակը, անվտանգության խնդիրները, պետական առաջնահերթությունները, բանակցությունների գործընթացը, օտարերկրյա պետությունների հետ հարաբերությունների կծիկը, ինչպես նաեւ փոխադարձ գործակցության հնարավորությունները, որպեսզի Արցախի ձայնը հասանելի դարձնենք աշխարհով մեկ: Այդ ուղղությամբ ՀՅԴ-ն շարունակական ծրագիր ունի. ԱՀ նախագահը, պետնախարարը եւ արտաքին գործերի նախարարն այցելել էին Սփյուռքի տարբեր համայնքներ մեր հովանավորությամբ եւ օժանդակությամբ: Այդ այցելությունները միայն ներազգային բնույթ չունեն, միայն գաղութների հետ խոսելու նպատակ չեն հետապնդում, այլ ներառում են նաեւ օտար հասարակության եւ տարբեր երկրների ղեկավարության հետ հարաբերությունների ոլորտը: Պետական պաշտոնյաների հետ հանդիպումներ ապահովելը խիստ կարեւոր է, հակառակ նրան, որ որպես չճանաչված հանրապետություն, շատ երկրներ խուսափում են Արցախի հետ քաղաքական հարաբերություններ հաստատելուց:

Իշխանությունների ներկայացուցիչների հետ խոսել ենք նաեւ ՀՅԴ մարմինների եւ Հայ դատի կորիզների հետ աշխատանքները համադրելու անհրաժեշտության մասին, որպեսզի շարունակենք տարիներ ի վեր տարվող աշխատանքը Արցախի ինքնորոշման իրավունքի հաստատման եւ անկախության ճանաչման համար: Այդ աշխատանքները տարվում էին պատերազմից առաջ, շարունակվել են նույնիսկ պատերազմի ընթացքում եւ դրանից հետո: Մեր շարունակական խորհրդակցությունների ընթացքում տեղեկություններ ենք փոխանակում Արցախի իշխանության ներկայացուցիչների հետ եւ որոշ աշխատանքներում ակնկալում ենք գործնական օժանդակություն եւ ջանքերի համադրում:

Ներկուսակցական իմաստով՝ ինձ համար ողջունելի է մեր շարքերի հետ հաղորդակցվելը եւ նրանց բազկերակը շոշափելը: Արցախի բոլոր շրջաններից մեր ընկերները հավաքվել են Ստեփանակերտում եւ ընկերական հավաք ենք ունեցել: Այդ հավաքի ընթացքում ներկայացրել էի թե Բյուրոյի նախաձեռնությունները, թե ՀՅԴ-ի կեցվածքը ազգային եւ հայրենի հարցերի նկատմամբ եւ թե տարբեր ոլորտներում ճշտված առաջնահերթությունները: 2022թ. մարտին է ավարտվել ՀՅԴ Ընդհանուր ժողովը եւ ձեւավորվել է նոր Բյուրո: Ծրագրման աշխատանքն ավարտվել է, եւ մենք հիմա մարտավարական եւ գործնական ուղեցույցի ենք վերածում այն, որպեսզի քայլ առ քայլ իրագործենք մեր առաքելությունը: Այդ առաքելությունը համահայկական է, բայց նրա մեջ խիստ կարեւոր տեղ ունի Արցախը: Որպես Հայ դատի իրագործման առաջին հանգրվան՝ Դաշնակցության համար ընդունելի չէ Արցախի իրավունքներից որեւէ նահանջ: Ուրախ եմ արձանագրելու, որ Արցախի մեր ընկերները, հակառակ ամեն տեսակ զրկանքների, պատերազմի հետեւանքների, պատրաստ են նոր թափով լծվել աշխատանքի: Մենք այդ աշխատանքի բեռը դյուրացնելու ենք, փորձելու ենք տալ նաեւ ֆիզիկական հնարավորություններ, որպեսզի Արցախում գործունեության դաշտն ընդլայնվի ու Արցախը ոչ միայն մնա որպես գաղափար, այլ շարունակական ներկայություն ապահովվի այստեղ, որպեսզի բոլոր շրջանակների կողմից ընկալվի՝ որպես իրենց տուն: Շուտով հատուկ ծրագրերի մասին Արցախի ժողովուրդը կիմանա: Այդ ծրագրերի մի մասն ունի համաժողովրդական բնույթ, մի մասն էլ՝ ներքին կազմակերպական:

- Հանդիպումներից մեկի ժամանակ խոսեցիք ազգային-ազատագրական պայքարի մասին. ի՞նչ է այն ենթադրում:

- Մանրամասնությունների մեջ չեմ ուզում մտնել, բայց հստակ է, որ մեր ռազմավարությունը, ճշտված Ընդհանուր ժողովի կողմից, հստակորեն նպատակադրել է Արցախի ամբողջական վերականգնումը: Մենք որեւէ ձեւով այս պարտությունը չենք նկատում վերջնական. սա ճակատամարտի պարտություն է» եւ պայքարը շարունակվում է: Սա նշանակում է, որ մենք քննարկում ենք տարբեր միջոցներ, որպեսզի կարողանանք վերականգնել Արցախի Հանրապետությունը եւ ապահովել ժողովրդի բարեկեցությունը: Այդ երկու նպատակներին հասնելու համար կան տարբեր միջոցներ՝ բարեգործական, բանակի հզորացում, Արցախի անվտանգության մակարդակի բարձրացում եւ թշնամիներին դիմագրավելու վճռականության վերահաստատում. այս բոլորը ազգային-ազատագրական պայքարի բաղկացուցիչ տարրեր են: Բոլորով աշխատելու ենք, որ Արցախն իրեն զգա հզոր, պինդ ու լավատես:

- Արցախի հարցի առումով՝ Հայ դատի աշխատանքներն ի՞նչ փոփոխություններ են կրել պատերազմից եւ Ընդհանուր ժողովից հետո:

- Աշխատանքները նախկին թափով շարունակում ենք, բայց որոշ պատշաճեցումներ հարկավոր են, մանավանդ՝ հաշվի առնելով համաշխարհային նոր կացությունը: Մի շարք հանգամանքների պատճառով՝ Ռուսաստան-Ուկրաինա պատերազմ եւ դրա ունեցած ազդեցությունը տարածաշրջանի վրա, Ադրբեջանի եւ Թուրքիայի հարաբերություններ, 44-օրյա պատերազմից հետո միջազգային ուժերը Արցախի կարգավիճակի հարցը փորձում են մղել երրորդ պլան՝ ասելով, որ հիմա խաղաղության հաստատման ժամանակաշրջան է, հիմա նոյեմբերի 9-ի հայտարարության գործնականացման պրոցեսն է առաջնահերթը, ուստի առայժմ մի կողմ պետք է դնել Արցախի կարգավիճակի հարցը: Մենք սրա դեմ պայքարում ենք, ավելի ենք շեշտավորում ԵԱՀԿ Մինսկի համանախագահության ձեւաչափի աշխուժացումը եւ Արցախի ինքնորոշման բացարձակ իրավունքի հաստատումը:

Համաշխարհային հանրությունը պետք է հասկանա, որ Արցախի կարգավիճակը շարունակում է այժմեական մնալ եւ պիտի աշխատել ավելի ամրապնդելու այն հասկացությունը, որ Արցախը երբեք չի լինի Ադրբեջանի կազմում: Մեր գործը որոշ չափով դժվարացել է, որովհետեւ միջազգային հանրության ուշադրությունն այլ կետերի վրա է սեւեռված, իսկ տարածաշրջանում փորձում են հակամարտությունները «սառեցնել» կամ «լուծել»: Իսկ Ադրբեջանը հայտարարում է, որ իր համար Արցախի հարց գոյություն չունի այլեւս: Բայց մենք արթուն ենք պահում այն գաղափարը, որ խնդիրները չեն լուծվել, պարտությունները ժամանակավոր բնույթ են կրում, եւ ինչպես նախկինում հաղթանակներ ենք կերտել, գալու է նոր հաղթանակներ կերտելու ժամանակը:

Ինչպես նախապես նշեցի, ՀՅ Դաշնակցության համար Արցախի 44-օրյա պատերազմում մեր պարտությունը ճակատամարտի կորուստներ են, ամեն առումով պատերազմը դեռ շարունակվում է, եւ մենք վհատվելու, հուսահատվելու տրամադրություն չունենք, ընդհակառակը՝ պինդ ենք եւ աներեր շարունակում ենք մեր աշխատանքը: Արցախը միշտ պետք է զգա համայն հայության նեցուկը, մանավանդ մեր համակուսակցական, համամիութենական կառույցների ներկայությունը, որպեսզի Արցախը մեկուսացած լինելու հոգեբանութունից դուրս գա: Ինչպես գիտեք, Արցախում այս պահին ՀՅԴ տարբեր շրջանների երիտասարդական միությունների եւ Հայ դատի հանձնախմբերի անդամներ կան: Այժմ մի քանի երիտասարդ ընկերներ ժամանակավորապես հաստատվել են Արցախում՝ փորձի փոխանցման, Հայ դատի եւ երտասարդական միության աշխատանքների օժանդակության համար: Նրանց մեկնելուց հետո նորերը կփոխարինեն իրենց:

Հատուկ ուշադրության առարկա է նաեւ Արցախի բարեկամների խմբերի ընդարձակման հարցը, որպեսզի մեր օտար բարեկամների այս համաշխարհային ցանցը եւս հավելյալ թափով մեր կողքին պայքարի Արցախի իրավունքների համար:

- Դիմադրության շարժումն արդյո՞ք իր նպատակին հասել է ՀՀ-ում եւ Սփյուռքում պայքարի ոգին արթնացնելու առումով:

- Իր առաքելության մի մասն արդեն հաջողություն է արձանագրել, բայց հիմնական միտումը, որ այս իշխանությունից Հայաստանը պիտի ձերբազատվի, տակավին չի իրագործվել: Անցած տարվա ընտրությունների արդյունքում Դաշնակցությունը վերադարձավ խորհրդարան «Հայաստան» դաշինքի գործընկերների հետ, բայց ոչ ակնկալված թվով, որպեսզի կարողանա այս հանգրվանում իշխանության կամ քաղաքական գծի փոփոխություն իրականացնել: Սակայն ամենակարեւոր ձեռքբերումներից էին ժողովրդի մեջ դիմադրական ոգին արթնացնելը «Զարթնիր լաո» շարժման միջոցով եւ իշխանության ազգավնաս ծրագրերը խոչընդոտելը: Մեր դիմադրության շնորհիվ կարողացանք հետաձգել մի շարք խնդիրներ, որոնք ավելի աղետալի հետեւանքներ կարող էին ունենալ Հայաստանի համար: Հուսանք նաեւ, որ այս ձեւով զորացրինք բանակցող հայկական կողմի ձեռքերը, որպեսզի նաեւ մեր թշնամիներին ցույց տանք, որ երկիրը հալած յուղի նման կուլ չի տալիս Հայաստանի նկատմամբ ճնշումները եւ պարտադրանքները:

Մենք հիմա նոր մարտավարություն որդեգրելու հրամայականի առջեւ ենք: Ներկայումս շաբաթական դրությամբ հավաքներ են իրագործվում, իսկ աշնան ամիսներից սկսած՝ նոր մոտեցումների, նոր մեթոդների կիրարկման անհրաժեշտություն կա: Ցավում եմ, որ այս իշխանությունները չեն հանդուրժում այն իրողությունը, որ իշխանություն-ընդդիմություն «հակամարտությունը» ժողովրդավար պետություններում նորմալ գործընթաց է, եւ որեւէ իշխանություն պետք է ձգտի միավորել բնակչությանը՝ մանավանդ ճգնաժամերի ժամանակ: Նկատի ունենալով համահայկական առումով համախմբվելու, հայրենիք-սփյուռք միասնություն ստեղծելու կարեւորությունը, այդ կետը տակավին մնում է բաց վերք: ՀՀ այսօրվա իշխանությունը ոչ միայն փորձում է հայրենի ժողովրդին պառակտել «հնի ու նորի», «սեւ ու սպիտակի» բաժանարար գծեր ստեղծելով, այլ այդ պառակտումը փորձում է տեղափոխել նաեւ Սփյուռք ու այնտեղ էլ ճեղքեր առաջացնել: Այս իմաստով լուրջ մտահոգություն ունենք, որ եթե Սփյուռքում մի մեծ զանգված դեմ էր այս իշխանություններին, այս վիճակը տեսնելով՝ շատերն ուղղակի օտարանում են հայրենիքից: ՀՅԴ-ի համար էական է հայրենիքի հավերժացումը, պետականության ամրապնդումը եւ, մանավանդ, Հայաստան-Սփյուռք միասնականության վերահաստատումը:

- ՀՀ իշխանությունների մոտ ընդգծված հակադաշնակցական մոլուցք է նկատվում, բոլոր ընդդիմադիրներից հատկապես ՀՅԴ-ի դեմ են թիրախավորված պայքար մղում: Ինչո՞վ եք բացատրում այս հանգամանքը եւ ինչպե՞ս խուսափել անտեղի թիրախավորումներից ու պիտակավորումներից:

- Նախ՝ այն իրողությունը, որ հատուկ թիրախավորում է տեղի ունենում ՀՅ Դաշնակցության նկատմամբ, ցույց է տալիս, որ ընդդիմությունը եւ նրա գլխավոր մղիչ ուժը՝ ՀՅԴ-ն, հասել են հաջողությունների, եւ դա անհանգստացրել է այս իշխանություններին: Եթե այս պայքարն այդքան անիմաստ էր եւ ապարդյուն, ինչպես փորձում են ներկայացնել ՀՀ իշխանավորները, ապա ինչո՞ւ է իշխանությունն այսքան մտահոգված Դաշնակցության ունեցած դերի եւ ազդեցության առումով: Կասկած չկա նաեւ, որ Դիմադրության շարժման հաջողություններից մեկը Սփյուռքը զորաշարժի ենթարկելն էր, եւ մեր պահանջներն այսօր ստացել են համահայկական տարողություն: Սփյուռքը տարբեր երկրներում հավաքներով, ցույցերով, բողոքի երթերով հանդես եկավ, եւ դա մեկ անգամ եւս փաստեց, որ համատարած դժգոհություն կա իշխանության վարած քաղաքականության նկատմամբ: Մոլուցքի հիմնական պատճառն այստեղ պետք է փնտրել, որ մեր հաջողություններն իրենց անհանգստացնում են, եւ փորձում են օգտագործել պետական ամբողջ ուժը Դաշնակցության աշխատանքը խանգարելու համար:

Դրանով է պայմանավորված ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանի՝ ՀՀ այցելելու արգելքը, մեր երիտասարդների ձերբակալման հանգամանքը, ՀՅԴ տեղական ղեկավարների նկատմամբ հալածանքը եւ աշխարհով մեկ ապատեղեկատվական արշավի ձեռնարկումը: Այդ աշխատանքի աղետալի դրսեւորումը Սփյուռքը պառակտելու փորձն է, որի համար Սփյուռքի հարցերով հանձնակատարն ու այլ պաշտոնակատարներ առաքվում են տարբեր համայնքներ, որպեսզի այնտեղ հենարաններ ստեղծեն եւ բաժանումներ կատարեն: Սա ազգային առումով քանդիչ քաղաքականություն է, եւ եթե իշխանությունները չհասկանան, թե ուր է տանում մեզ բոլորիս այս մոլուցքը, մեր թշնամիներն առավել արմատական ու պահանջկոտ կդառնան եւ նոր զիջումներ կպահանջեն ՀՀ-ից: Այս հանգրվանում էական է համահայկական միասնությունը եւ համազգային օրակարգի ճշտումը, բայց ներկա մթնոլորտում դժվար է երեւակայել, որ այդպիսի բան կլինի մոտ ապագայում, որովհետեւ վստահությունը լրիվ խախտված է:

Զրուցեց Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

Ադրբեջանի կազմում որեւէ կարգավիճակ չի կարող ապահովել Արցախի անվտանգությունը

Հուլիսի 6-ին Ստեփանակերտում կայացել է ԱՀ արտաքին գործերի նախարարության կողմից հրատարակված «Արցախյան հիմնախնդիրը եւ Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունը» գրքի շնորհանդեսը: Այն Երեւանում ներկայացվել է հունիսի 20-ին: Գրքի արցախյան շնորհանդեսին ներկա էին ԱՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը, ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, քաղաքական, հասարակական գործիչներ: Գրքի գլխավոր խմբագիրը ԱՀ արտաքին գործերի նախարար, պ.գ.թ. Դավիթ Բաբայանն է: Նրա խոսքով՝ գրքի վրա ԱՀ ԱԳՆ աշխատակազմն աշխատել է մոտ մեկ տարի: Հրապարակված աշխատության, արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի հետ:

- Գրքի շնորհանդեսի ժամանակ խոսել եք Արցախյան հիմնահարցի վերաբերյալ միասնական կարծիք արտահայտելու մասին: Այս առումով հայկական տիրույթում ինչ-որ տարակարծություններ կա՞ն:

- Խնդիրը տարակարծությունների մեջ չէ: Խնդիրն այն է, որ կան մի շարք կարեւորագույն փաստաթղթեր, կա Սահմանադրություն, որի դրույթներին անվերապահորեն պիտի հետեւենք, կա ԱԳՆ կանոնադրություն, 2020թ. հուլիս ամսվա՝ ԱՀ նախագահի հրամանագիրը, որտեղ նշված է, որ ԱԳՆ-ն պիտի լինի ԱՀ արտաքին քաղաքականության համակարգողը: Պարզ է, որ երկրի նախագահն է հանդիսանում արտաքին քաղաքականության ուղղվածության որոշողը, ԱԳՆ-ն էլ իրականացնում է ծրագիրը: Հատկապես վճռորոշ պահերին շատ կարեւոր է պահպանել համապատասխան կառուցվածքը, կանոնները, որովհետեւ չպահպանելու դեպքում բարդություններ են լինելու:

Մենք չպիտի սպասենք, որպեսզի բարդություն ստեղծվի, պետք է ժամանակին այնպես անենք, որ այդ դժվարությունները չլինեն, որովհետեւ հիմա մեր ճակատագիրն առանց չափազանցնելու որոշվում է քաղաքական եւ աշխարհաքաղաքական տիրույթում: Եթե ժամանակին արտաքին քաղաքականությունը եղել է պետության կենսագործունեության, նրա շահերի պաշտպանության կարեւոր ուղղություններից մեկը, հիմա ամենակարեւորներից մեկն է, եթե ոչ՝ առանցքայինը: Եվ մենք պետք է շատ հստակ հետեւենք այդ կանոններին:

- Գիրքը հրատարակվել է ԱՀ ԱԳՆ աշխատակազմի կողմից: Իսկ ՀՀ Ձեր գործընկերների կարծիքները հաշվի առե՞լ եք:

- Մենք մեր ռեսուրսներով ենք սահմանափակվել, որոշ կոնսուլտացիաներ արել ենք Արցախի գիտական, քաղաքական որոշ շրջանակների հետ, հատկապես՝ պատմական հարցերի վերաբերյալ: Մենք ունենք հարուստ արխիվ: Այս աշխատանքը հիմնված է կիրառական խորհուրդների, փաստերի եւ փաստաթղթերի վրա: Որպես գլխավոր խմբագիր՝ իմ ղեկավարությամբ աշխատել են տարբեր ստորաբաժանումներ: Սա պետք է լինի մնայուն ուղեցույց: Միգուցե ժամանակ առ ժամանակ թարմացվելու է, բայց ավելի շատ՝ զուտ տեխնիկական մասերով: Աշխատանքը լավ հիմք է հետագայում եւս վերահրատարակելու:

- Արցախի հարցով բանակցողներին արդյո՞ք տրամադրել եք աշխատության օրինակներից:

- Գիրքը դեռեւս նոր է տպագրվել: Երբ ասում եմ, որ պետք է համակարգված մոտենալ արտաքին քաղաքականությանը, սա ոչ միայն պետական մարմինների, քաղաքական գործիչների գործունեությանն է վերաբերում, այլ նաեւ այս կամ այն փաստերի իմացությանը ծանոթ լինելուն: ԱԳՆ-ն նաեւ խորհուրդների տեսքով իր տեսլականն է ներկայացնում այս կամ այն հարցի մեկնաբանության պարագայում:

Քաղաքականության մեջ մեկնաբանությունը ոչ պակաս կարեւոր է, քան փաստաթղթում գրանցվածը, որովհետեւ մեկնաբանությունից շատ բան է կախված: Միեւնույն փաստաթուղթը կարելի է տարբեր ձեւով մեկնաբանել, եւ քաղաքականությունն այդ մեկնաբանությունների հնարավորությունը տալիս է: Պարզապես պետք է ունենալ համապատասխան պրոֆեսիոնալիզմ եւ երեւակայություն:

Տարբեր գերատեսչությունների, ոլորտների ներկայացուցիչներ հաճախակի են այս կամ այն հարթակներում հանդիպումներ ունենում, այդ թվում՝ նաեւ ադրբեջանամետ կամ Ադրբեջանի ինչ-որ ներկայացուցիչների հետ, եւ մենք պետք է պատրաստ լինենք, զինված լինենք, որպեսզի կարողանանք իրենց փաստարկներին հակադրել ճշմարտությունը:

- Ներկա պահին ի՞նչ ձեւաչափով են ընթանում բանակցությունները:

- Կարող ենք բնորոշել հետեւյալ ձեւով, որ հիմնականում կենտրոնանում են Ադրբեջան-Հայաստան բարձրաստիճան հանդիպումների վրա եւ համանախագահող ամեն երկիր կարծես թե առանձին է այդ հանդիպումները կազմակերպում: Ընդհանրության մեջ ձեւաչափը գործում է խեղաթյուրված ձեւով, քանի որ Արցախը չկա: Բայց նույնիսկ այս ձեւաչափով երկխոսությունն ավելի գերադասելի է, քան պատերազմը, չնայած էֆեկտիվ երկխոսության համար անհրաժեշտ է պահպանել «կարմիր գծերը»:

- Ինչքանո՞վ կարող է ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների վերսկսման վրա ազդել ԱՄՆ համանախագահի փոփոխությունը:

- Համանախագահները որոշ ժամկետով են նշանակվում: Այստեղ համակարգային եւ պետական մոտեցում կա, եւ անհատի այս կամ այն դիրքորոշումը վճռորոշ չի կարող լինել: Իհարկե, անձից շատ բան է կախված, եւ երբեմն այնպիսի անձեր կարող են այս կամ այն պաշտոնը զբաղեցնել, որն ի ցույց է դնում այդ հարցում պետության նպատակները: Բայց այստեղ մենք անձերի հետ կապված տարօրինակ զարգացումներ չենք տեսնում: Կան օբյեկտիվ զարգացումներ: Դա այն է, որ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների միջեւ հարաբերությունները բարդացել են, փաստորեն սառեցված են: Այս օբյեկտիվ իրականությունը չի կարող չազդել ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Բայց ժամանակը ցույց կտա: Պաշտոնապես դեռեւս որեւէ մեկը չի հրաժարվել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափից:

- Իսկ ինչի՞ հիման վրա է ՌԴ ԱԳՆ ղեկավարը հայտարարել, որ այդ ձեւաչափը չկա, չի գործում:

- Չգործելը՝ չի նշանակում, թե ապամոնտաժվել է: Դեֆակտո այդ աշխատանքը սառեցված է, որովհետեւ այս երկրների միջեւ հարաբերությունները գերլարված են: Ռուսաստանի դեմ միայն Ուկրաինան չի մարտնչում, ուղղակի կամ անուղղակի ձեւով տարբեր երկրներ են մարտնչում, իսկ սա չի կարող իր ազդեցությունը չթողնել:

- Արցախյան հարցի մասին խոսելիս վերջերս շեշտը դնում են անվտանգության, ժողովրդի իրավունքների վրա, իսկ ինքնորոշման իրավունքը կարծես երկրորդական պլան է մղվել: Ի՞նչ կարող ենք անել այն առաջին պլան մղելու համար:

- Ես հենց այնպես չասացի, որ շատ բան կախված է մեկնաբանությունից: Կարգավիճակը, իրավունքներն ու ազատությունները միմյանց հետ փոխկապակցված են: Առաջինը իրավունքներն ու ազատություններն ես դնում, հետո կարգավիճակը, թե հակառակը, ամեն ինչ կախված է մեկնաբանությունից: Ադրբեջանի կազմում որեւէ կարգավիճակ չի կարող ապահովել Արցախի անվտանգությունը եւ մեր իրավունքներն ու ազատությունները: Ադրբեջանի կազմում ոչ մեր իրավունքները, ոչ ազատությունները, ոչ էլ մեր ինքնորոշումը, անվտանգությունը չեն պահպանվելու: Հետեւաբար, կարգավիճակը պետք է լինի Ադրբեջանից դուրս:

Ես այս օրինակը շատ եմ բերել: Համակենտրոնացման ճամբարներում այդ խեղճուկրակ մարդիկ ունեին իրավունքներ, ինչ-որ տեղ՝ անվտանգություն եւ ազատություն յուրահատուկ ձեւով: Նրանք իրավունք ունեին քնել, ազատ էին քնելու ձախ կամ աջ կողքի վրա, ազատ էին տեսնել ցանկացած երազ, ոչ ոք չի կարող իրենց ազատությունն այդ առումով սահմանափակել: Բայց ի՞նչ կարգավիճակով էին նրանք՝ նույնիսկ այդ ազատությունները, հնարավորություններն ունենալով: Այս օրինակը վառ ձեւով ցույց է տալիս, թե ինչ կարող է լինել Արցախի հետ, եթե մենք Ադրբեջանի կազմում լինենք: Բնական է, Ադրբեջանի կազմում ցանկացած փորձ կամ բերելու է պատերազմի, կամ հայաթափության: Այդ դեպքում Արցախում կարող են մնալ անճար, ապազգային էլեմենտներ, որոնք կստանան այդ նույն կարգավիճակը, սրանից բխող այն իրավունքներով ու ազատություններով, որ ունեին համակենտրոնացման ճամբարների բանտարկյալները: Այսինքն, ամեն ինչ կախված է մեկնաբանությունից:

- Այս ամենով հանդերձ՝ Ադրբեջանի հետ հնարավո՞ր է կառուցողական բանակցություններ վարել:

- Եթե պրոֆեսիոնալ եւ հայրենասեր մոտեցում է ցուցաբերվում, իհարկե՝ պետք է վարել բանակցություններ: Կառուցողական կլինեն դրանք, թե ոչ, ցույց կտա ժամանակը: Դա կախված է հակառակ կողմից՝ Ադրբեջանից: Բայց մենք պետք է պատրաստ լինենք նրանց հետ ապրել որպես հարեւանը հարեւանի հետ: Իհարկե, հիմա շատ բարդ է դրա մասին մտածել: Ես տեսանելի ապագայում չեմ տեսնում հնարավորություն, որ լրիվությամբ բոլոր հարցերը կհարթվեն, բայց սա էլ մեր ճակատագիրն է:

Երբ ասվում է, որ չկան հավերժական թշնամիներ ու բարեկամներ, ես համաձայն չեմ: Կան հավերժ թշնամիներ՝ դա եսասիրությունն է, հայրենասիրության պակասն է, անձնականը հանրայինից գերադասելն է, նախանձն է. այս վտանգներն են ողջ պատմության ընթացքում մեր ամենազորեղ թշնամիները հանդիսացել: Եթե մենք կարողանանք այդ թշնամիների դեմ պայքարել, արտաքին թշնամիների դեմ պայքարը եւ հարաբերությունների կարգավորումը շատ ավելի հեշտ կլինի:

- Օկուպացված տարածքներում մեր մշակութային հուշարձանների ոչնչացման, աղվանացման կամ ուդիացման ակնառու դեպքերը տեսնելով, Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են շարունակում խոսել Ադրբեջանի կազմում մշակութային ինքնավարության, ազգային ինքնությունը պահպանելու մասին:

- Մշակութային ինքնավարության գաղափարն առհասարակ մեր տարածաշրջանում եւ մեր հակամարտության համար պարզապես անիրականանալի երեւույթ է, որովհետեւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը դժվար կարգավորվելիք հակամարտություն է: Այստեղ կարգավորումը մենք պետք է դիտարկենք որպես ռազմաքաղաքական, աշխարհաքաղաքական հավասարակշվածության պահպանում: Իսկ Ադրբեջանի կազմում ցանկացած տարբերակ պարզապես բերելու է կամ նոր արյունահեղության, կամ հայաթափման: Խնդիրը օբյեկտիվ բնույթ է կրում, որը կախված է Ադրբեջանի յուրահատկությունից, այդ ազգի ձեւավորման գործընթացից, որ դեռեւս շարունակվում է, ազգային փոքրամասնությունների ստվար զանգվածի առկայությունից, որը կարող է «դոմինոյի էֆեկտ» ստանալ եւ Ադրբեջանը կարող է փլուզվել ներսից, այդ գործընթացին Թուրքիայի ներգրավվածությունից, նրա ծավալապաշտական ծրագրերից: Սա այնքան էլ հեշտ չէ: Ով չի հասկանում կամ չի պատկերացնում՝ գիտելիքի պակաս ունի կամ պարզապես այլ խաղ է տանում, որովհետեւ մենք Ադրբեջանի կազմում ապագա չունենք:

- Վերջերս այցեր, հանդիպումներ եք ունեցել արտասահմանում: Ի՞նչ առաջնահերթությամբ եք շարժվում այդ հանդիպումների ժամանակ:

- Մեր արտաքին քաղաքականության օրակարգը ե՛ւ երկկողմ հարաբերությունների հաստատումն է, ե՛ւ Արցախի ճանաչումը, բայց մենք մեկը մյուսի հետ չենք փոխկապակցում, որովհետեւ եթե փոխկապակցենք, թերանալու ենք թե՛ մեկում, թե՛ մյուսում: Բացի դրանից, կարեւոր է Արցախի սուբյեկտայնության պահպանումը:

Հիմա շատ կարեւոր է, որպեսզի բոլոր ջանքերը գործադրենք Արցախի փրկության համար: Պահը ճակատագրական է, եւ եթե միասնական չգործենք, հիշատակված հավերժ թշնամիների դեմ չպայքարենք, շատ բարդ է լինելու: Դրա համար այդ ուղղությամբ պիտի կենտրոնացնենք մեր ողջ ներուժը եւ պայքարենք: Այս ճակատագրական պահին մի բան է մնացել՝ ամեն ինչ անենք, որպեսզի պետության ու ժողովրդի շահերը պաշտպանենք:

Հարցազրույցը՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ

Առանձնատների եւ բնակարանների կառուցման ընթացքի մասին

Արցախում ընթացող բնակարանաշինական ծրագրերի մասին ամփոփ տեղեկատվություն փոխանցելու համար «Ապառաժ»-ը հարցազրույց է ունեցել ԱՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Արամ Գասպարյանի հետ, այնուհետեւ այցելել մի շարք շինհրապարակներ:

Ավելի քան 3600 առանձնատան եւ բնակարանի շինարարական աշխատանքներ են ընթանում

44-օրյա պատերազմի ավարտից անմիջապես հետո Արցախում մեծ թափով սկսվել ու մինչեւ հիմա շարունակվում են բնակարանաշինական աշխատանքները: Այս պահին թվով 3636 առանձնատան եւ բնակարանի շինարարական աշխատանքներ են ընթանում: Դրանցից 1406-ը կառուցվում է ԱՀ պետական բյուջեի, 1047-ը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի, 991-ը՝ մասնավոր կազմակերպությունների միջոցներով, իսկ 192-ը՝ բարեգործական ծրագրերով: «Ապառաժ»-ի հետ զրույցում այս տվյալներն է ներկայացնում ԱՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Արամ Գասպարյանը:

«Մասնավոր շինարարական կազմակերպությունների կողմից դեռեւս նախքան պատերազմն սկսված շենքերի բնակարանների շինարարական աշխատանքները «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ ավարտին են հասցվել ու տրամադրվել են տեղահանված, 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին, սոցիալական այլ խմբերի պատկանող քաղաքացիներին»,- նշել է Ա. Գասպարյանը: Նրա խոսքով՝ անցած տարվա ընթացքում մոտ 300 ընտանիքների նոր բնակարաններ են հատկացվել:

Քաղաքացիներին կացարաններով ապահովելու համար նաեւ վերակառուցվել, վերափոխվել են որոշ շինություններ՝ դրանք հարմարեցնելով բնակության համար: Ստեփանակերտի «Արցախ» թաղամասի շենքերից մեկի տանիքը ձեւափոխվել է մանսարդային

հարկի եւ կառուցվել 9 բնակարան: Ստեփանակերտի նախկին 6-րդ դպրոցի շենքը նույնպես վերակառուցվել է. 16 բնակարաններից բաղկացած առաջին մասնաշենքն արդեն հանձնվել է շահագործման: 14 բնակարաններից բաղկացած երկրորդ մասնաշենքում ներկայումս ընթանում են ներքին հարդարման վերջնական աշխատանքներ: Այնուհետեւ կիրականացվեն նաեւ բակային տարածքի բարեկարգման եւ ասֆալտապատման աշխատանքները: Կառուցապատումն իրականացնում է «Շին-Վեր Պլյուս» ՍՊԸ-ն: Ֆինանսավորումը կատարում է «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Կաղարծի համայնքում դպրոցի հին շենքը վերակառուցվել է եւ 14 բնակարանները տրամադրվել են բնակիչներին:

Շրջաններում նոր թաղամասերը կառուցվում են գոյություն ունեցող բնակավայրերին կից՝ կոմունիկացիաների, ճանապարհների հարցը հեշտությամբ լուծելու համար:

«Ստեփանակերտի Տիգրան Մեծ փողոցի հարակից տարածքում 6 մասնաշենքից կազմված թաղամաս է կառուցվելու, որից 3 մասնաշենքի աշխատանքներն արդեն սկսված են: Կառուցվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով, «Պանտ» եւ «Կապավոր» ՍՊԸ-ների կողմից: 3 մասնաշենքերից մեկը 9, երկուսը 12 հարկանի շենքեր են լինելու՝ 218 բնակարանով: Նախատեսվում է կառուցապատման աշխատանքները շարունակել նախկին լողավազանի ու դրան հարակից տարածքով՝ կառուցելով 3 շենք»,- տեղեկացրել է Արամ Գասպարյանը: Մարտունի 45 հասցեում վնասված շենքի տեղում կառուցվում է նոր 6 հարկանի շենք: Այն նախատեսված է այդ շենքի բնակիչների եւ մոտակայքի վթարային շենքերի բնակիչների համար: Աշխատանքներն իրականացնում է «Հաբանդ» ՍՊԸ-ն՝ ԱՀ բյուջեի միջոցներով: Աջափնյակ թաղամասում սկսվել են 15 չորս հարկանի շենքերի (240 բնակարան) կառուցման աշխատանքները. աշխատանքներն իրականացնում է «Մեչտա» արտադրական կոոպերատիվը: Պլանավորված է Աջափնյակում եւս մեկ թաղամաս կառուցել՝ 192 բնակարանով:

Բնակարանների, առանձնատների կառուցման աշխատանքների մի ստվար մասն ընթանում է Ասկերանի շրջանում: «Իվանյան համայնքի տարածքում կառուցվում է երեք թաղամաս. առաջինը երեքհարկանի 15 շենքերից է կազմված՝ 180 բնակարանով: Թաղամասի 11 շենքերը (132 բնակարան) նախատեսում ենք շահագործման հանձնել մինչեւ ընթացիկ տարվա վերջ: Կառուցվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: Սկսվել են նաեւ արտաքին կոմունիկացիաների կառուցման աշխատանքները: Այդ թաղամասը կառուցում են 8 շինարարական կազմակերպություններ: Պլանավորվում է 15 շենքից բացի՝ եւս 9 շենք կառուցել: Դրանց մի մասի տենդեր մրցույթները հայտարարված են, մոտակա ժամանակներում թաղամասը կընդլայնվի ու կսկսվեն աշխատանքները»,- ասել է փոխնախարարը:

Բացի դրանից, Իվանյան համայնքի տարածքում կառուցվում է 107 տներից բաղկացած երկրորդ թաղամասը, որից 86-ը՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով, 21-ը՝ ԱՀ բյուջեի: Այստեղ 13 շինարարական կազմակերպություններ են աշխատում: Նորագյուղ տանող ճանապարհի մոտ Իվանյան համայնքի երրորդ թաղամասն է կառուցվում: 53 առանձնատներից 25-ը Արցախի պետական բյուջեի միջոցներով են կառուցվում, մյուսները՝ մասնավոր կազմակերպությունների կողմից:

«Հովսեփավան համայնքում երկու թաղամաս է կառուցվում՝ 92 եւ 59 առանձնատներով: 92 տները կառուցվում են բարեգործական ծրագրով (կառուցման աշխատանքներն իրականացնում է «Կապավոր» ՍՊԸ-ն), իսկ 59-ից 27-ը՝ Արցախի բյուջեի, 32-ը՝ «Հայաստան» հիմնադրամի միջոցներով: Հովսեփավանի գործող դպրոցը կվերակառուցվի որպես մանկապարտեզ եւ համայնքի համար նոր դպրոց կկառուցվի»,- նշել է մեր զրուցակիցը:

Նոր թաղամասեր են կառուցվում Ասկերանի շրջանի Նորագյուղ, Աստղաշեն համայնքներում: Աստղաշենի 149 առանձնատներից բաղկացած թաղամասը, ինչպես նաեւ Նորագյուղի 145 եւ 250 առանձնատներով թաղամասերի շինարարությունը ԱՀ բյուջեի միջոցներով «Կապավոր» ՍՊԸ-ն է իրականացնում:

Խնածախում 160 առանձնատներով նոր թաղամաս է կառուցվում ԱՀ բյուջեի միջոցներով, «Միքշին» ՍՊԸ-ի կողմից: Կարմիր գյուղում նոր թաղամաս է կառուցվում (64 առանձնատուն): Քռասնի համայնքում Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվերով 12 երեք հարկանի շենք է կառուցվում՝ թեթեւ հավաքովի կոնստրուկցիաներով:

Ճարտար համայնքում նախքան պատերազմն սկսված 9 բնակարանից բաղկացած շենքը պետական բյուջեի միջոցներով ավարտին է հասցվում, մոտակա ժամանակներում կսկսվեն արտաքին կոմունիկացիաների կառուցման աշխատանքները:

Դահիրավ համայնքում Հ1-ի հավաքագրած միջոցներով իրականացվում է «100 տուն» ծրագիրը: ԱՀ պետական բյուջեի միջոցներով այստեղ կատարվում են հողային աշխատանքներ. կառուցվում են տների հիմքերը, հենապատերը, ճանապարհները: Նախատեսվող 100 տներից 9-ի աշխատանքներն ավարտման փուլում են, եւս 6-ի հիմքերը դրվել են:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին, Արամ Գասպարյանը տեղեկացրել է, որ կան մշակված ծրագրեր, որոնց աշխատանքները դեռեւս չեն սկսվել: Այս տարվա ծրագրում նախատեսված է Խաչմաչում 32 առանձնատներից բաղկացած թաղամասի կառուցում, Կարմիր շուկայում նոր թաղամասի կառուցում: Առաջիկա տարիներին նախատեսված են՝ 139 առանձնատուն Խնածախում, 198-ը՝ Այգեստանում, 28-ը՝ Պատարայում, 50-ը՝ Պառավաթումբում, 129-ը՝ Վարանդայում, 57-ը՝ Մսմնայում, 80-ը՝ Ականաբերդում: Բոլոր թաղամասերի գլխավոր հատակագծերն արդեն մշակված են:

Գյուղական բնակավայրերում կառուցվող առանձնատներն ունեն մոտ 1200 քառ. մետր կից հողամաս: Արամ Գասպարյանը նաեւ ավելացրել է, որ նախատեսված է առաջին փուլով առանձնատները եւ բնակարանները հանձնել բնակիչներին, իսկ երկրորդ փուլով տարածքների բարեկարգման, ասֆալտապատման, կանաչապատման, խաղահրապարակների, ցանկապատների, մայթերի կառուցման աշխատանքները շարունակել:

Անդրադառնալով շինարարական աշխատանքների վերահսկողության մասին հարցին, Արամ Գասպարյանը նշել է, որ վերահսկողությունն իրականացվում է պարբերաբար՝ նախարարության տեխնիկական հսկիչների, նախագծերի հեղինակների, «Հայաստան» համահայկական հիմնադրամի մասնագետների եւ քաղաքաշինության պետական տեսչության մասնագետների կողմից: «Բացի դրանից, նախարարության պատվերով ՀՀ-ից երկու անգամ Քաղաքաշինության կոմիտեին առընթեր գործող քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի մասնագետներն այցելել են շինհրապարակներ, ստուգել բետոնի որակը, ամրանների համապատասխանությունը նախագծին եւ դրական եզրակացություն են ներկայացրել: Նախատեսում ենք վերոնշյալ կենտրոնի մասնագետներին պարբերաբար հրավիրել»,- նշել է նախարարի տեղակալը:

Արամ Գասպարյանից նաեւ հետաքրքվեցինք, թե ինչով են պայմանավորված տարբեր շինհրապարակներում օգտագործվող շինանյութերի տարբերությունները, եւ արդյո՞ք այդ հանգամանքն անարդարացի չէ ապագա շահառուների համար: Նա նշել է, որ բոլոր նախագծերը փորձաքննության են ենթարկվել եւ համապատասխանում են տարածաշրջանում գործող շինարարական նորմերին: Բացի դրանից, բոլոր նախագծերն էլ ունեն իրենց առավելություններն ու թերությունները:

Տաթեւիկ ՍՂԱՋԱՆՅԱՆ

→5

Պետք է պայքարենք մեր յուրաքանչյուր գյուղի, յուրաքանչյուր տան համար

Քարքարոտ ճանապարհներով մեքենան սլանում է անտառի լանջին ծվարած, օրվա կապիտուլյանտ իշխանությունների գրչի հարվածով սահմանամերձ դարձած Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ գյուղ:

Գյուղում տղամարդկանց շատ քիչ ենք հանդիպում. պատճառը մեկն է՝ բերքահավաքի աշխատանքներ են ընթանում, դաշտերում են, իսկ մի մասն էլ հայրենի հողի սահմաններն են պաշտպանում:

Գյուղը հայտնի է իր հերոսական անցյալով: Սարդարապատում հերոսացած Փիրումյան եղբայրները հենց այս գյուղից էին: Գյուղի բնակիչները մասնակցել են նաեւ 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմին, որի ընթացքում զոհվել է 106 նախիջեւանիկցի:

Գյուղացիներն իրենց մասնակցությունն են ցուցաբերել նաեւ Արցախյան առաջին պատերազմին: 1988-1989 թվականներին գյուղում կազմավորվել է ինքնապաշտպանական կամավորական ջոկատ, որը 1992 թվականին Արցախի ՊԲ ստորաբաժանումների կազմում մասնակցել է Ասկերանի, Մարտակերտի, Քարվաճառի եւ Արցախի այլ բնակավայրերի ազատագրական մարտերին:

1992 հունիսի 12-ին գյուղը գրավվել է ազերիների կողմից եւ ազատագրվել 1992 թվականի սեպտեմբերի 4-ին:

Գյուղի վաշտի հրամանատարն էր Արամ Շուրայի Սարուխանյանը, ով արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի (2002 թիվ): Գյուղում հանդիպում ենք Արամի տղային՝ Արեն Սարուխանյանին, ով ծնվել եւ մեծացել է այս գյուղում եւ իր բոլոր արմատներով կառչած է հայրենի գյուղին: Երիտասարդ ուսուցիչն այսօր, չնայած առկա բոլոր դժվարություններին ու խնդիրներին, շարունակում է ապրել գյուղում եւ իր ունեցած գիտելիքներով կրթել երեխաներին, նրանց մոտեցնել իրենց արմատներին:

Արենի հետ զրուցել ենք ամենատարբեր թեմաներից, սակայն նախ՝ Արենի մասին:

Արեն Սարուխանյանը ծնվել է 1986թ. Նախիջեւանիկ գյուղում: Ավարտել է նույն գյուղի դպրոցն ու ընդունվել ԱրՊՀ հումանիտար ֆակուլտետի պատմության բաժինը, որն ավարտել է 2010-ին: 2005-2007թթ. ժամկետային ծառայության է անցել ՊԲ շարքերում: 2014-ին ավարտել է պատմության ֆակուլտետի մագիստրատուրան:

Ամուսնացել է 2016-ին եւ ունի 2 որդի: 2010-ից առ այսօր պատմության ուսուցիչ է աշխատում հայրենի գյուղում, նաեւ ավագանու անդամ է: Արենը 2008-ից անդամակցում է նաեւ ՀՅ Դաշնակցություն կուսակցությանը, 2019-2020թթ. եղել է Ասկերանի շրջանի «Բերդ» կոմիտեի անդամ: 2020թ. ԱՀ ԱԺ ընտրություններում ներգրավված է եղել ՀՅ Դաշնակցության ընտրական ցուցակում:

- Արեն, ինչպիսի՞նն է գյուղի կյանքը՝ գյուղում ապրող երիտասարդի աչքերով:

- Պատերազմից հետո որոշ չափով, իհարկե, անորոշություն է տիրում, բայց ժողովուրդն իր առօրյա հոգսերով է, երիտասարդներն իրենց աշխատանքին են լծված: Թեեւ անորոշ իրավիճակին, առաջընթաց կա եւ աստիճանաբար վերականգնվում է գյուղի նախապատերազմյան իրավիճակը՝ չնայած անվտանգության հետ կապված որոշ խնդիրներին: Կյանքը շարունակվում է, եւ հուսով ենք, որ տարեցտարի ավելի լավ է լինելու:

Գյուղում ընթանում են շինարարական աշխատանքներ. գյուղի կենտրոնում կառուցվում է ինովացիոն տեխնոլոգիաների կենտրոն, գյուղի սկզբնամասում՝ բնակելի թաղամաս: Այս տարիների ընթացքում նոր այգիներ են տնկվել, երիտասարդներն իրոք աշխատում են, եւ ողջունելի է, որ հուսալքություն՝ այդքան չկա: Ընդամենը մեկ ընտանիք է լքել գյուղը, մնացածներն ապրում են ու պատրաստ են մինչեւ վերջ ապրել ու արարել Արցախ աշխարհում:

Գյուղի միջնակարգ դպրոցում ստեղծվել է «Արմաթ» լաբորատորիա, եւ աշակերտներն արդեն կարողանում են իրենց գիտելիքներն ի ցույց դնել այդ ոլորտում:

Պետությունը, որոշ բարերարներ փորձում են խթանել գյուղատնտեսության զարգացումը: Բոլոր ցանկացողներին հատկացվել են մրգատու ծառատեսակներ, յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել են ընտանի կենդանիներ:

- Ո՞րն է գյուղում ապրող երիտասարդի հիմնական զբաղմունքը

- Վերջին տարիներին հիմնական զբաղմունքն այգեգործությունն է: Անասնապահությունն անկում է ապրել՝ կապված սահմաններում առկա անվտանգության խնդիրների եւ արոտավայրերի պակասության հետ: Շինարարական աշխատանքներ են ընթանում, եւ երիտասարդներն ընդգրկված են այդ ոլորտում եւս: Հիմնական զբաղմունքը մնում է այգեգործությունը, անասնապահությունն ու մեղվաբուծությունը:

Աշխատատեղերից զատ՝ գյուղում պետք է ժամանցի վայրեր եւս լինեն երիտասարդների եւ երեխաների համար: Վերջերս վերանորոգվել է երեխաների խաղահրապարակը: Չունենք մանկապարտեզ, սակայն երեւի մոտակա տարիներին այդ խնդիրը լուծվի: Մեծ հույսեր ունենք ճանապարհի ասֆալտապատման հետ կապված:

→ 6

Առանձնատների եւ բնակարանների կառուցման ընթացքի մասին

4 ←

Հայաստանի Հանրային հեռուստաընկերության փայտե տները

Ասկերանի շրջանի Դահիրավ համայնքում կառուցվում են փայտե բնակարաններ Հանրային հեռուստաընկերության եւ «Ապրելու Արցախ» հիմնադրամի կողմից համատեղ իրականացվող «100 տուն Արցախում» նախագիծի շրջանակում:

Այս պահին, ըստ «Ապրելու Արցախ» հիմնադրամի կայքում նշված տեղեկատվության, հավաքվել է 161 509 254 դրամ: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021թ. հունիսի վերջից, իսկ առաջին 6 բնակարանները շահագործման են հանձնվելու 2022թ. հուլիսի վերջին: Նշենք, որ այդ փայտե տներից միայն մեկը կառուցվում է ՀՀ ԱԺ նվիրատվության միջոցով:

Արդեն վիճակահանությամբ ընտրվել են այն 6 ընտանիքները, որոնք պետք է ստանան այդ բնակարանները:

Ծրագրի համահիմնադիր Սամվել Մովսիսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ վիճակահանությունն անցկացվում է բոլոր շրջանների տեղահանված բնակիչների համար: Նա հավաստիացրեց, որ բոլորը տեղյակ են լինում վիճակահանության մասին:

Ս. Մովսիսյանի խոսքով՝ իրենց կարեւոր գործընկերը Արցախի կառավարությունն է, քանի որ ամեն ինչ միասին են անում:

Խոսելով նախագծի ավարտի ժամկետների մասին, Ս. Մովսիսյանն ասաց, որ հստակ ժամկետներ նախանշված չեն, քանի որ կախված է նրանից, թե ինչքան արագ կհավաքվի անհրաժեշտ գումարը: Նրա խոսքով՝ հետպատերազմյան շրջանում Արցախի հետ կապված հետաքրքրությունները մարում են մարդկանց մոտ:

Նա նաեւ նշեց, որ մարդիկ օր առաջ սպասում են, թե երբ պետք է տեղափոխվեն: Այդ հարցին, թե արդյոք մարդկանց մոտ դժգոհություն չի առաջանում, երբ որ մի մասին քարե տներ են հատկացվում, մյուս մասին՝ փայտե, Ս. Մովսիսյանը պատասխանեց, որ այս տարբերակով ավելի արագ եւ ավելի էժան տներ են կառուցվում, իսկ մարդիկ էլ անհամբեր են օր առաջ այդտեղ տեղափոխվելու համար:

Ասկերանի քարե առանձնատները

Ասկերանի շրջանի Նորագյուղ եւ Հովսեփավան համայնքներում բնակարանների շինարարական աշխատանքներ է կատարում նաեւ «Կապավոր» ՍՊԸ-ն:

«Կապավոր» ՍՊԸ-ի հանրային կապերի պատասխանատու Նարեկ Սահակյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ Նորագյուղ համայնքում «Կապավոր» ՍՊԸ-ն բնակելի թաղամաս է կառուցում Շուշիի շրջանի Քարին տակ համայնքի տեղահանված բնակիչների համար:

«Նախագծով նախատեսված 145 առանձնատնից աշխատանքներ են կատարվում 106-ում: Խոսքը հիմքերի կառուցման, պատերի շարման, ծածկի եւ տանիքածածկի կառուցման, ինչպես նաեւ միջնորմների կառուցման մասին է:

Տները կառուցվում են քարով՝ երկաթբետոնե միաձույլ սյուներով ու ծածկով: Շինարարությունը մեկնարկել է 2021թ. հոկտեմբերին եւ նախատեսվում է ավարտել 2024-ին: Քարին տակի բնակիչների համար նախատեսված թաղամասը կառուցվում է Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության պատվերով՝ պետական ֆինանսավորմամբ»,- ասել է Ն. Սահակյանը:

Ռուսաստանաբնակ բարերար Սերգեյ Համբարձումյանի եւ Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության համաֆինանսավորմամբ Ասկերանի շրջանի Հովսեփավան համայնքում «Կապավոր» ՍՊԸ-ն 2021 թվականի հուլիսից կառուցում է թաղամաս, որտեղ նախագծով նախատեսված է 92 առանձնատուն՝ 2, 3, 4 եւ 5 սենյականոց, համապատասխանաբար՝ 70-130 քառակուսի մետր բնակմակերեսով:

«Տները քարից են՝ երկաթբետոնե» միաձույլ սյուներով ու ծածկով: Այժմ 80 տան պատերն արդեն շարված են, 65 տան մոնոլիտային ծածկերը կառուցված են, 50 տան տանիքածածկի աշխատանքներն ավարտվել են, ներքին հարդարման աշխատանքներից 40 տան միջնապատերը շարված են, կատարվում են սվաղման եւ սալիկապատման աշխատանքներ: Ծրագրի ավարտը նախատեսվում է 2023 թվականի վերջին»,-նշել է Ն. Սահակյանը:

Ասկերանի շրջանի Իվանյան համայնքում ամենամեծ շինարարական եռուզեռն է ընթանում: Այստեղ միանգամից մի քանի թաղամաս է կառուցվում: Ստեփանակերտ-Իվանյան մայրուղու հարեւանությամբ կառուցվող բազմաբնակարան շենքերից մեկը կառուցվում է «Գրանդ Ալյանս» ՍՊԸ-ի կողմից:

Ընկերության փոխտնօրեն Վիտալի Շաքարյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ շենքի կառուցումը նախատեսում են ավարտին հասցնել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Ընկերությունը բնակարանային շինարարության աշխատանքներ է կատարում նաեւ Ստեփանակերտի Ալեք Մանուկյան 120 հասցեում: Իվանյան-Ասկերան մայրուղու հարակից հատվածում կառուցվում են արագ հավաքվող պանելային եւ քարե 107առանձնատներ:

«Ապառաժ»-ի հետ զրույցում ԱՀ քաղաքաշինության նախարարության տեխհսկիչ Արմեն Գալստյանը նշեց, որ այդ հատվածում քարե առանձնատներ կառուցվում են մի շարք շինարարական կազմակերպությունների կողմից, իսկ արագ հավաքվող տները կառուցվում են բարեգործական միջոցներով, իսկ իրենք էլ հետեւում են տեխնիկական պահանջների համապատասխանությանը:

Անդրադառնալով բնակարանների շինարարական աշխատանքների ավարտման ժամկետներին, Արմեն Գալստյանը նշեց, որ տարբեր շինարարական ընկերություններ տարբեր ժամանակահատվածներում են սկսել իրենց շինարարական աշխատանքները, ուստի չկան հստակ նախանշված ժամկետներ, որի ընթացքում պետք է ավարտվեն աշխատանքները:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պետք է պայքարենք մեր յուրաքանչյուր գյուղի, յուրաքանչյուր տան համար

5 ← ***- Ասում են, որ երիտասարդները գյուղում մնալով՝ չեն կարողանում զարգանալ, առաջընթաց ունենալ եւ նոր հաջողությունների հասնել: Արդյո՞ք ունեցել եք կամ ունեք քաղաքում հաստատվելու մտադրություն:***

- Իհարկե, համաձայն չեմ այս տեսակետի հետ: Մեր գյուղից քաղաք տեղափոխվելու համար յուրաքանչյուրն ունեցել է իր պատճառները. մեկը երեխայի առողջական խնդիրներով պայմանավորված է տեղափոխվել մայրաքաղաք, մյուսն աշխատանքի հետ կապված: Սա միգրացիա է, ինչ-որ տեղ հասկանալի է, բայց լավ է, որ նրանք իրենց հայրենիքը չեն լքում, շարունակում են ապրել Արցախ աշխարհում:

Ես միշտ իմ ընկերներին ասում եմ, որ եթե հնարավորություն լինի ավելի մեծ ասպարեզներում աշխատելու, առաջընթաց ապահովելու համար, թող բոլորն էլ առանց ամաչելու այդ քայլը կատարեն, որովհետեւ դա ամբողջ համայնքի, ամբողջ ժողովրդի ձեռքբերումը կդառնա: Ովքեր էլ որ աշխատանքի բերումով լքել են գյուղը, շարունակում են կապ պահպանել գյուղի հետ:

- Պատերազմի արդյունքում ձեր գյուղը եւս առանց կրակոցի դարձավ սահմանամերձ: Ի՞նչ զգացողություն եք ունենում ամեն առավոտ արթնանալով՝ ձեր դիմաց թշնամիներ տեսնելիս:

- Իրոք, անընդունելի եւ շատ անտանելի իրավիճակ է, սակայն առայժմ համակերպվում ենք այդ իրավիճակի հետ, չնայած առկա բարդություններին. ժամանակի խնդիր է: Ունենք հողատարածքներ, որ արդեն 3-րդ տարին է՝ չենք մշակում անվտանգային խնդիրներից ելնելով:

Վերջերս իմացանք նաեւ Աղավնոյի, Բերձորի մասին, որ նախկին ԼՂԻՄ-ից դուրս տարածքները պետք է տրվեն Ադրբեջանին: Սա սխալ մոտեցում է, քանի որ ԼՂԻՄ-ն էլ մեկ մարդու՝ Ստալինի կամայականությամբ գծված սահմաններ են եղել, եւ դա մեզ համար իրավական հիմք չպետք է ծառայի: Պետք է պայքարենք մեր յուրաքանչյուր գյուղի, յուրաքանչյուր տան համար:

- Ինչպե՞ս սկսվեց 2020թ. սեպտեմբերի 27-ը Ձեզ համար:

- Իհարկե, լսում էինք, որ զորավարժություններ են ընթանում, նախապատրաստական աշխատանքներ են կատարվում թշնամու կողմից, բայց կարծես թե չէինք ուզում հավատալ, որ պատերազմ կսկսվի:

Սեպտեմբերի 27-ի առավոտն ինձ համար սկսվեց արկերի պայթյունով: Մեր բակից նույնպես լսվում էր պայթյունի ձայները, եւ այդ ժամանակ արդեն հավատացինք, որ իրոք պատերազմ է: Սկսվեց գյուղացիների տարհանումը. 2 օր զբաղվեցինք այդ հարցերով, եւ հոկտեմբերի 1-ին ես զորակոչվեցի տանկային բրիգադ ու մասնակցեցի պատերազմին: Կարելի էր ավելի կազմակերպված ու համարձակ որոշումներ ընդունել, բայց այդ կտրվածքով նույնպես թերացումներ եղան ու անկազմակերպվածության պատճառով հենց առաջին օրերին մեծ կորուստներ ունեցանք. պետք է անպայման դրանից դասեր քաղել:

- Պատմության ուսուցիչ լինելով՝ դուք ծանոթ եք անցյալում մեր ունեցած պարտության պատճառներին եւ նախադրյալներին: Արդյո՞ք այս պարտությունը նման էր մյուս պարտություններին, թե՞ տարբերվում էր իր առանձնահատկություններով:

- Չբացահայտված հանգամանքներ կան, որոնք ժամանակի ընթացքում հայտնի կդառնան, բայց այն, որ պատերազմին մեր ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ չէր, դա ակնհայտ էր: 2020թ. ընտրությունները, քաղաքական իրավիճակը ցույց էր տալիս, որ ժողովուրդն արհեստականորեն բաժանված է տարբեր կուսակցությունների, հոսանքների, եւ այդ անկազմակերպվածությունն իր վատ հետեւանքները թողեց:

Մյուս կողմից, պատերազմի օրերին չկար հստակություն, թե յուրաքանչյուր ոք, թեկուզ գյուղում, ինչով պետք է զբաղվի: Հատկապես սահմանամերձ գյուղերում դա շատ կարեւոր էր, բացի դրանից պահեստազորն իր աշխատանքները շատ ուշ է սկսել կատարել ու շատ թերացումներով, անկազմակերպ, որն իր հետեւանքներն ունեցավ, եւ մենք չկարողացանք, ինչպես որ հարկն է, կանգնել մեր բանակի, մեր զինվորի կողքին: Մյուս մեր կրած պարտություններին նման է այն առումով, որ քաղաքական միաբանություն չկար. Չարենցի խոսքերն իրոք այժմեական են, եւ դրանից պետք է մեծ դասեր քաղեն մեր ղեկավարներն ու քաղաքական գործիչները:

- Մեկ բառով՝ քաղաքակա՞ն, թե՞ ռազմական պարտություն կհամարեք:

- Երեւի քաղաքական, որովհետեւ յուրաքանչյուր որոշում արդեն իսկ քաղաքական որոշում է: Եթե ճիշտ քաղաքականություն վարվեր՝ սկսած 1994 թվականից, եւ մենք ունենայինք ժամանակակից զենք ու զինամթերք, ժամանակակից մոբիլ զորքեր, հատուկ վարժեցված փոքր ջոկատներ, ամեն ինչ այլ ընթացք կունենար: Հույսը դնել 18-20 տարեկան զինվորի վրա՝ ճիշտ չէ: Պետք է ունենալ մարտունակ, կրթված բանակ, եւ ավելի հեշտ կլինի մեր հայրենիքը պաշտպանելը:

- Որպես պատմության ուսուցիչ՝ նկատո՞ւմ եք արդյոք աշակերտների մոտ հետաքրքրություն պատմության եւ հատկապես հայոց պատմության հանդեպ:

- Կրթության ոլորտը միանշանակ տուժել է այս 2 տարիների ընթացքում՝ կապված քովիդի եւ պատերազմի հետ: Պատերազմից հետո աշակերտները որոշ չափով հիասթափված են, բայց կարծում եմ՝ դա ժամանակավոր է: Աշակերտներն արդեն գիտակցում են, որ պետք է բոլոր ուղղություններով զարգացած լինեն: Վերջին տարիներին ավելի շատ հետաքրքրություն են ցուցաբերում ֆիզիկամաթեմատիկական առարկաների նկատմամբ:

Ամեն դեպքում, աշակերտները հայրենասիրությամբ են լցված, նվիրված են իրենց հողին, ընտանիքին, իսկ նրանց հիասթափություն էլ առկա անորոշությամբ է պայմանավորված:

Հայոց պատմության նկատմամբ՝ չէի ասի, որ հետաքրքրությունը շատ մեծ է. յուրացնում են այնքան, որքան իրենց հետաքրքիր է: Չեն ուզում մանրամասների մեջ խորանալ, չեն ուզում ամեն ինչ հիշել, իմանալ. ժամանակակից տեխնոլոգիական դարում իրենց ավելի ինքնավստահ են զգում գուգլի հետ միասին: Սակայն գիտելիքն ամենահզոր զենքն է, եւ մեր ուսուցիչները միշտ նրանց հորդորում են լավ սովորել:

- Ասում են, որ վերջին պատերազմի պարտության պատճառներից մեկն էլ պատմությունից դասեր չքաղելն է, պատմության չիմացությունն ու ազգային ինքնագիտակցությունից հեռացումը: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս տեսակետը:

- Համաձայն չեմ այդ տեսակետի հետ, որովհետեւ 2020-ից ընդամենը 4 տարի առաջ եղել է քառօրյա պատերազմը եւ մեր սերունդը ցույց է տվել, որ պատրաստ է կանգնել ու զոհվել հանուն իր հայրենիքի մի թիզ հողի: Հիմնականում անօդաչուների առկայությունն էր, որ խոչընդոտեց մեր հաղթանակին, բայց մեր զինվորները, մեր սպաները հերոսաբար են իրենց դրսեւորել, հատկապես՝ մեր ժամկետայինները, եւ այդպիսի զինվորներով միայն հպարտանալ կարելի է: Թերություններ ամեն բանակում կարող են լինել, սակայն կան թերություններ, որ աններելի են. դրանք չպետք է լինեին: Յուրաքանչյուր ոք պետք է իր բաժին պատասխանատվությունը կրի այդ պարտության համար:

- Դու նաեւ դաշնակցական ես: Ինչպե՞ս ստացվեց, որ որոշեցիր անցնել կուսակցության շարքերը: Ի՞նչ է նշանակում, ըստ քեզ, դաշնակցական լինել:

- Ես Դաշնակցության մասին փոքր տարիքից եմ լսել, կարելի է ասել՝ դաստիարակվել եմ մեր փառապանծ ֆիդայիների մասին երգերով, պատմություններով: Իմ հայրը նույնպես հայրենասեր է, եւ այդպիսի պատմություններով իմ ուշադրությունը սեւեռեց դեպի հայրենիքը, հայրենասիրությունը:

Ուսանող դառնալուց հետո ես համոզվել եմ, որ վաղուց դաշնակցական եմ, իսկ կուսակցության շարքեր անցնելն արդեն ժամանակի հարց էր: Այսպիսի խոսք կա, որ յուրաքանչյուր հայ որոշ չափով դաշնակցական է, թեկուզ եւ չեն խոստովանում դա: Դաշնակցական լինել՝ նշանակում է լինել հայրենիքի զինվոր՝ նվիրված հողին ու ժողովրդին, եւ պատրաստ լինել կռվով պաշտպանել հայրենիքն ու ժողովրդին:

- Դաշնակցությունը միշտ էլ շրջադարձային դերակատարություն է ունեցել հայոց պատմության մեջ: Այսօր ստեղծված ծանր կացության պայմաններում, երբ մեր ժողովուրդը կանգած է պետականության կորստի, Արցախի կորստի առջեւ, ո՞րն է Ձեր կարծիքով Դաշնակցության առաքելությունն ու դերը:

- Թե Դաշնակցության, թե մեր ղեկավարների առաջնային խնդիրը պետք է լինի պաշտպանության եւ կրթության ոլորտում արմատական փոփոխություն կատարելը: Պետք է կրթությունը լինի նպատակային, հայրենասիրական ուղղությամբ, որպեսզի իրոք դաստիարակվեն իրենց հայրենիքին, հողին նվիրված սերունդներ, որոնք լավ կրթված կլինեն եւ հոգեբանորեն պատրաստ պաշտպանելու հայրենիքը:

- Նժդեհն ասել է, որ ապագան վտանգված ժողովուրդների վերջին խաղաթուղթը՝ վերադաստիարակությունն է: Այս առումով՝ հատկապես կարեւորվում է ուսուցիչների դերը: Ի՞նչ եք անում դուք, որպեսզի աշակերտների միջից հանեք պարտվածի հոգեբանությունը եւ կարողանաք նրանց մեջ կրկին արթնացնել կորցրածը ետ բերելու հույսն ու պատրաստակամությունը:

- Հիմնականում ուշադրություն պետք է դարձնել զրույցի մեթոդով մեր աշակերտների մոտ հայրենասիրության մակարդակը բարձրացնելուն, մեր հերոսների, զորավարների, մարշալների եւ ֆիդայիների անձնուրացության եւ քաջագործությունների մասին պատմություններով, բացատրել, որ պարտությունը վերջակետ չէ մեր ժողովրդի համար:

Մեր ժողովուրդը դարերի եւ հազարամյակների ընթացքում ապացուցել է, որ ապրելու ու արարելու կամք ունի: Ըստ իս, մեր սերունդը նույնպես այդպիսինն է եւ ի վիճակի է կրել իր ուսերին դրված պարտականությունները: Ճիշտ դաստիարակության ու աշխատանքի արդյունքում մենք կերաշխավորենք այդպիսի արդյունք:

Հայրենասիրության մակարդակը բարձրացնելու համար պետք է նաեւ մշակութային հիմնարկների թիվը մեծացել:

- Ինչպե՞ս եք պատկերացնում Արցախի ապագան:

- Հավատում եմ, որ արցախահայությունն անպայման ունենալու է այս հողում ապրելու իրավունք. մենք պարտավոր ենք այս սահմաններում ապրել ու զարգանալ, բազմանալ, պատրաստ լինել ապագա մարտահրավերներին: Սա անվիճելի է: Մեզնից գրավված տարածքների բնակչության մեծամասնությունն էլ ցույց է տվել իր նվիրվածությունն Արցախ աշխարհին՝ վերադառնալով եւ կրկին ապրելով Արցախում: Պետք է ուշադրություն դարձնենք սահմանների պաշտպանության ամրապնդմանն ու հնարավորություն ստեղծենք ժողովրդի համար, որպեսզի ապրեն, արարեն ու շենացնեն այս մի բուռ հողը:

- Մեր ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ է Սումգայիթի, Բաքվի եւ Օղակ օպերացիայի հիշողությունները: Այսօր մենք եւս կարծես օղակի մեջ ենք, սակայն մեր ժողովուրդը շարունակում է, անտեսելով այս բոլոր վտանգները, ապրել այստեղ: Ո՞րն է մեր ժողովրդի այդ վճռակամության հիմքը:

- Հայրենասիրությունը: Ժողովրդի՝ իրենց հողին, իրենց ծննդավայրին նվիրվածությունը: Ամեն մեկի համար էլ դժվար է հայրենիքը լքելը: Իհարկե, կան մարդիկ, որ հեշտությամբ են լքում, սակայն ցավալի է, որ մեր ժողովրդի մի մասը ստիպված եղավ Արցախից հեռու ապրել: Սա արցախահայության, մեր ժողովրդի ապրելու, արարելու հազարամյակների իղձն է՝ ապրել ազատ ու անկախ հայրենիքում: Մենք հասնելու ենք մեր նպատակին՝ անկախության ճանապարհով դեպի վերամիավորում մայր հայրենիքի հետ: Արցախի՝ Ադրբեջանի կազմում գոյությունը հնարավոր չէ:

Հարցազրույցը՝ Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Արցախի հերոս Մենուա Հովհաննիսյան

Նրանք, ովքեր հայրենիքը սիրում են այն ճանաչելով, սիրում են առանց ավելորդ խոսքերի, ամենօրյա հայրենանվեր ու հայրենաշեն աշխատանքով, պատրաստ են հանուն այդ սիրո նաեւ զոհաբերելու ամենաթանկը՝ կյանքը: Նման մարդկանց համար հայրենիքը գերագույն արժեք է, վեր ամենքից եւ ամեն ինչից: Նրանք ազգի ընտրյալ զավակներն են՝ ի վերուստ իրենց համար կանխորոշված ճակատագրով: Եվ եթե նրանց կատարած աշխատանքի մասին խոսվում է անգամ իրենց մահվանից հետո, ուրեմն արդարացված է ծնունդը, ավելին՝ մահն անգամ: Այդ մահն անմահություն անունն ունի, եւ սերունդների համար հայրենապաշտության իրական ու ճշմարիտ, երբեք չմոռացվող դաս է:

Արցախի հերոս Մենուա Հովհաննիսյանը ծնվել է 1985թ. դեկտեմբերի 22-ին Ռուսաստանի Դաշնության Սարատովի մարզի Բալաշով քաղաքում: Նրա ծննդյան 34-րդ ամյակին մայրը՝ Կարին Տոնոյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է.

«ՌԴ Սարատովի մարզի Բալաշով քաղաքում վաղ լուսաբացին ծնվեց լույս ճառագող մի մանկիկ: Բուժքույրերն ապշեցին նրա ճերմակ ու մաքրամաքուր մաշկից ու հարցրին նոր խաղաղված հայուհուն.

- Անունն ի՞նչ եք դնելու:

- Մենուա,- մի կերպ շշնջաց խոնջած մայրը:

- Մենուա՛, իսկ ինչպե՞ս է թարգմանվում:

- Չի թարգմանվում, դա հայոց հզորագույն արքաներից մեկի անունն է:

Քույրերը ծիծաղեցին ու փոքրիկին պարզեցին մորը.

- Հիմա ամեն ինչ պարզ է, մամչկա, Դուք իրոք արքա եք ծնել, նայեք՝ նրա վրա հետծննդյան որեւէ հետք չկա, բացի երկրորդ մաշկից, մենք ասում ենք **«в рубашке радился...»,** երջանիկ որդի եք ունենալու...»:

Մենուան Հայաստան վերադառնալուն պես, բարձր առաջադիմությամբ հանձնելով քննությունները, անմիջապես ընդունվում է 4-րդ դասարան:

Դպրոցում շատ էր սիրում աստղագիտություն եւ աշխարհագրություն առարկաները, ինչպես նաեւ պատմության հետ առընչվող առարկաները:

Դպրոցն ավարտելուն պես պետք է ընդունվեր հեռուստառեժիսուրա բաժին, սակայն մտքափոխվում է եւ տեղափոխվում ՌԴ-ում սովորելու: Որոշել էր իրավաբանական կրթություն ստանալ, սակայն 2 տարի անց վերադառնում է հայրենիք եւ ստանձնում «Հայ ասպետ» հեռուստանախագծի համակարգող- տնօրենի պաշտոնը:

Աշխատանքին զուգահեռ՝ Մենուա Հովհաննիսյանը հեռակա սովորել եւ ավարտել է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի հանրային կառավարում բաժինը:

2016թ. ապրիլին կամավորագրվելով հայրենիքի պաշտպանությանը՝ մեկնել է Արցախ՝ մասնակցելու Ադրբեջանի կողմից սանձազերծված Քառօրյա պատերազմին: Արցախում ծառայելով շուրջ մեկ ամիս, վերադառնում է Երեւան հաստատակամ որոշմամբ՝ պետք է հետախույզ դառնա:

Ըստ Կարին Տոնոյանի՝ Մենուան երազում էր մեծ ու գեղեցիկ տուն ունենալ սեփական այգիով, որ երեկոյան մոր ու զավակների հետ հող մշակի: Երազանքի հետքերով քայլելով՝ 2013թ. դեկտեմբերի 16-ին Մենուան ամուսնանում է Թամարա Կոստանդյանի հետ:

«Մենուան ինձ փախցրել է՝ առանց ճանաչելու, առանց շփվելու: Ընդամենը 2 անգամ է ինձ աշխատավայրում տեսել, հավանել է, ընկերների հետ եկել ու փախ ցրել, անմիջապես մայրիկի տուն է տարել: Մայրն էլ եկավ, ինձ տեսավ ու ասաց՝ դե որ բերել է՝ բերել է, էլ չենք տանում: Հետագայում, երբ հարցնում էի՝ բայց ինչի՞ փախցրեցիր, ասում էր՝ բա թոռներիս պատմելու բան չունենա՞մ... Ինքն իմ լավագույն ընկերն էր, մենք ընկերներ էինք», - Aysor.am -ի հետ զրույցում ասել էր Թամարան:

Նրանք 2 երեխա են ունեցել: Առաջնեկի անունը Սարդուր է, իսկ աղջկա անունը՝ Արինա:

Մենուան ու իր կինը զավակների մեջ հայրենասիրություն են սերմանել դեռ շատ փոքր հասակից: Նրանք թեեւ փոքր, սակայն սպասում են հոր վերադարձին:

«Շատ թուրք կա, բոլորին պապան պիտի հաղթի, նոր վերադառնա», - այսպես են զավակներին բացատրել հոր բացակայությունը:

«Ու երբ արդեն ինքն էր որդի ունենում, որոշեց, որ Սարդուր է անվանակոչելու՝ չնայած շատ-շատերի զարմանքին ու առարկությանը: Զինվորական գործին նվիրվելուց հետո երբեմն ծիծաղելով ասում էր. «եթե ես էլ չկարողանամ, Սարդուրս Արցախի սահմանները կհասցնի Քուռին, չէ՞ որ Արցախ-Էթուինին Արարատյան հայկական թագավորությանն է միացրել Սարդուր Բ-ն՝ որդուս նախանվանակիրը»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է մայրը:

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի խաղաղ երկինքը կրկին փոթորկվել էր: Թշնամին կրկին ներխուժել էր Արցախ, հողը տնքում էր արկերի անդադար տեղատարափից: Հայրենի երկրի դարպասներն անառիկ պահելու համար շատ շատերի հետ Արցախ է մեկնում նաեւ Մենուա Հովհաննիսյանը:

«Պատերազմ է սկսվել, Մենուան գնում է, տուն եկեք». սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 8:30-ին Մենուայի մայրիկից՝ Կարին Տոնոյանից զանգ ստացավ կինը՝ Թամարան, ով այդ պահին երեխաների հետ հայրական տանն էր:

«Երբ մայրիկը զանգեց, անմիջապես շտապեցի տուն», - պատմել է Թամարա Կոստանդյանը:

Երիտասարդ՝ երկրապահների միության փոխնախագահ Մենուա Հովհաննիսյանը Երկրապահ կամավորների միություն ընդգրկվելուն պես 6 ամիս կամավորների հետ զինվորական պատրաստվածություն էր անցկացրել:

2020 թվականի սեպտեմբերի 28-ին Քեռու ջոկատի կազմում, որպես 3-րդ դասակի հրամանատար, մեկնել է Արցախ:

Թամարա Կոստանդյանը նշել է, որ մեկնելուց առաջ ամուսնուն հարց էր ուղղել, թե հնարավո՞ր է, որ իրենք չմեկնեն, ինչին ի պատասխան՝ Մենուան ասել էր.

«Չի կարող նման բան լինել, մենք պետք է գնանք»:

Հոկտեմբերի 2-ին դասակի տղաների հետ իրականացրել է Մատաղիսի զորամասի ապահով նահանջը, որի ընթացքում իր անմիջական մասնակցությամբ անտառներից դուրս են բերվել 80-ից ավել ժամկետային զինվորներ:

Հոկտեմբերի 3-ին Արցախի նախագահի հետ 1 ժամյա քննարկումներից հետո պատասխանատվություն է վերցնում իր վրա՝ իրականացնելու Արեգասար լեռան վրա հարձակումը: Հոկտեմբերին 5-ին արդեն թշնամու թիկունքում հանդիպելով մոտ 180 հոգանոց թշնամուն՝ կարողացել են ջարդել մոտ 140-150 հոգու: Մարտի ժամանակ զոհվել է նաեւ 33-ամյա Մենուան:

Հայրենիքին անձնվիրաբար նվիրվելով, Մենուան զոհվեց հանուն հայրենյաց սիրո, այն գիտակցումով, որ հետնահանջի իրավունք չունեն: Քաջի մահով ընկնելով, Մենուան եւս միացավ անմահների երամին եւ իր կատարած սխրանքին համապատասխան արժանացավ Արցախի հերոսի կոչման՝ ստանալով Ոսկե Արծիվ շքանշան: Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով 2020թ. հոկտեմբերի 21-ին Մենուա Հովհաննիսյանին արժանանում է Արցախի հերոսի կոչման:

«Մենուան ընկերների հետ Արցախ էր եկել իր մեծ երազանքի հետեւից՝ հող հայրենին պաշտպանելու եւ նրա հարատեւ գոյությունն ապահովելու համար: Նրա հետ ծանոթացա պատահական, առաջնագծում: Շփումը կարճ էր, ընդամենը մեկ օր, բայց շատ տպավորիչ: Նրա համարձակ պահվածքը, լուսավոր ու պայծառ մտքերն անմիջապես գրավեցին իմ ուշադրությունը: Անգամ հասցրեցինք խոսել հաղթանակից հետո անելիքների մասին: Բայց ծրագրերն անկատար մնացին...

Կարին Տոնոյանի որդուն ինձ համար բացահայտեցի՝ որպես իսկական հայ ասպետի, որի կատարած հերոսական քայլը կանխատեսելի էր մարտի մեկնելու պահից: Անմահացավ՝ հանուն իր երկու անչափահաս բալիկների եւ հանուն մեր ժողովրդի հպարտ ու արժանապատիվ ապագայի...

Վշտակցում եմ նրա ընտանիքին եւ բոլոր հարազատներին:

Մարտադաշտում նրա կատարած սխրագործությանը հայրենիքն արժանի գնահատական է տալիս. Մենուա Հովհաննիսյանն իմ հրամանագրով արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը:

Խոնարհումս մեր հայրենիքի ազատության համար բոլոր ընկածների հիշատակին:

Հազա՛ր փառք մեր ժողովրդի լավագույն զավակներին»,- այդ կապակցությամբ ֆեյսբուքյան իր էջում գրառել էր Արցախի նախագահը:

Ավելի ուշ Կարին Տոնոյանը հրապարակավ դիմել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ պահանջելով կես ճանապարհին չկանգնել, բանակցությունները վարել հաղթողի դիրքերից, այն անվանելով որդեկորույս մայրերի միակ պահանջ:

«Բանակցության սեղանի շուրջ նստելու պահին անպայման հիշեք՝ Դուք դեռ շատ մայրերի չեք հանձնել նրանց որդիների մարմիններն անգամ, ուրեմն որեւէ պայմանով, լսո՞ւմ եք՝ որեւէ պայմանով չհանձնեք այն հողերը, որոնց վրա նրանք ընկել են, չդավեք մեր որդիների թափած արյանը: Այս պատերազմում մենք հաղթելու ենք»,- հայտարարել էր նա:

Ավաղ, պատերազմում չհաղթեցինք, շատ մայրեր այդպես էլ չգտան իրենց որդիներին, իսկ բանակցություններում էլ վարչապետն ամենեւին էլ հաղթողի դիրքերից չէր բանակցում, սակայն սա չի նշանակում, որ Մենուայի եւ նրա զինակից ընկերների պայքարը կիսատ կթողնեն գալիք սերունդները, որովհետեւ Մենուան վստահ էր, որ մի օր իր Սարդուրը եւ մյուսները ավարտին կհասցնեն իրենց հայրերի սրբազան պայքարը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ օգնության միության «Սոսե» մանկապարտեզների տնօրենները Իրանում

Իրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունն այս տարի տոնում է կազմավորման 78-ամյակը: Տոնակատարության միջոցառումներին մասնակցելու համար Արցախից հրավիրված էին Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի տնօրեն Նելլի Ղուլյանը եւ Խնձիրստանի «Սոսե» մանկապարտեզի տնօրեն Սուսաննա Գրիգորյանը: Հուլիսի 2-6-ը տեւած այցի մասնամասների, ստացած տպավորությունների մասին «Ապառաժ»-ը զրուցել է Նելլի Ղուլյանի հետ:

Նրա խոսքով՝ համավարակի, 44-օրյա պատերազմի պատճառով մի քանի տարի այդ տոնը չէին նշում, եւ որոշել են այս տարի մի քիչ այլ ձեւաչափով նշանավորել այն:

Հուլիսի 4-ին մեծ շուքով նշվել է կազմակերպության 78-ամյակը, հրավիրված էին տարիների ընթացքում կենտրոնի հետ առնչություն ունեցած մարդիկ: Պաշտոնականին հաջորդել է երաժշտական մասը, նաեւ ճաշկերույթ էր նախատեսված: Պաշտոնական մասի ժամանակ ելույթ է ունեցել նաեւ Նելլի Ղուլյանը՝ ներկայացնելով Արցախում տիրող իրավիճակը եւ կարեւորելով Իրանի համայնքի եւ ընդհանրապես Սփյուռքի դերը տարիներ շարունակ Արցախի կողքին գտնվելու, վերքերն ամոքելու գործում:

Արցախից ժամանած հյուրերն Իրանում Արցախի այցեքարտ համարվող ժենգյալով հաց պետք է թխեին: «Քանի որ եղանակը տաք էր, այստեղից հնարավոր չէր կանաչիներ տանել եւ ստիպված տեղում ենք հայթայթել անհրաժեշտ բաղադրիչները: Այնտեղ ժենգյալով հացն ուրիշ ձեւով էին թխում, մենք մեր տարբերակը ցույց տվեցինք: Մեզ համար հատուկ տաղավար էին հատկացրել, այստեղից էլ փախլավա էինք տարել: Շատ հավանեցին եւ ժենգյալով հացը, եւ փախլավան: Ընկերուհիները արագ-արագ կտրտում ու բաժանում էին, բայց սեղանից հերթը չէր վերանում»,- պատմում է Նելլի Ղուլյանը:

Հաջորդ օրերին նրանք այցելել են առաջնորդական, «Ալիք» թերթի խմբագրություն, հայկական եկեղեցիներ, «Թեւանիկ» բարեսիրական խմբի գրասենյակ, թանգարաններ: «Շատ էինք ուզում մեր մասնագիտության հետ կապված մանկապարտեզներ էլ այցելել, բայց այնտեղ հայկական մանկապարտեզները դպրոցների հետ ամառային շրջանում փակվում են»,- նշում է Ստեփանակերտի Սոսե մանկապարտեզի տնօրենը: Նա նշեց, որ հայկական փակված դպրոցներ էլ կային, քանի որ հայ համայնքի ներկայացուցիչների մեծ մասը հեռացել է Իրանից: Բայց ուրախալի է, որ զգալի թիվ էին կազմում ՀՀ-ում հաստատվածները:

«Սոսե» մանկապարտեզների տնօրենները տպավորված են վերադարձել: «Շատ ջերմ ընդունելության ենք արժանացել, որոշ պահերի նույնիսկ մոռանում էինք, որ այլ երկրում ենք գտնվում: Իրանի համայնքը միշտ էլ մեր կողքին է եղել, «Հայ կին» միությունը դեռ 1998թ. մանկապարտեզի մեր առաջին հովանավորներից էր: Հիմա էլ ամեն կերպ պատրաստ են օժանդակել, շատերն են ցանկություն հայտնել այցելել Արցախ: Նրանք էլ, ինչպես ողջ հայությունը, անորոշ կացության մեջ են, բայց հույս ունեն, որ լավ կլինի»,- ասում է Ն. Ղուլյանը:

Հավելենք, որ Իրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը ստեղծվել է 1944 թվականին, եւ մասնաճյուղեր ունեցել Իրանի տարբեր քաղաքներում, որոնցում եղել է հայ համայնք, ինչպիսին են Թեհրանը, Սպահանը, Թավրիզը, Ուրմիան, Գերդաբադը, Շիրազը, Էրաքը, եւ Շահին Շահրը: Ներկայումս կազմակերպությունում աշխատում են 4 միություններ՝ սկաուտական, մարզական, արվեստների եւ երեցների, ինչպես նաեւ՝ 4 մասնաճյուղեր՝ Թավրիզի, Ուրմիայի, Գերդաբադի եւ Շիրազի:

Տ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան շրջանի «Արցախ ֆոնդ»-ը Արցախի կողքին

Հուլիսի սկզբներին Արցախում էր ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան շրջանի «Արցախ ֆոնդ» բարեգործական հիմնադրամի հանձնախմբի անդամ Փոլին Դոստումյանը: Նա «Արցախ ֆոնդի» Արցախի մասնաճյուղի պատասխանատու Տրդատ Մարտիրոսյանի ուղեկցությամբ 10 օրերի ընթացքում այցելել է Արցախի մի շարք սահմանամերձ բնակավայրեր, ծանոթացել բնակիչներին հուզող խնդիրներին: «Ապառաժ»-ի հետ զրույցում Փոլին Դոստումյանը նշել է, որ սահմանային գյուղերի բոլոր բնակիչները վճռական են տրամադված, ցանկանում են կառչած մնալ իրենց հողին, սակայն որոշ դեպքերում աջակցության կարիք ունեն:

«Երիտասարդությունը ցանկանում է կառչած մնալ իր հողին: Եթե հարմար աշխատանքային պայմաններ ունենան, շատ ավելի կհեշտանա նրանց ամենօրյա կյանքը, ապրուստը: Իհարկե, առաջին տեղում անվտանգության հարցն է, մի շարք բնակավայրերում թշնամին 300-400 մետր հեռավորության վրա է, եւ դրանից ելնելով՝ նաեւ գյուղատնտեսական աշխատանքներով, անասնապահությամբ զբաղվելն է դժվարանում: Գյուղերի բնակիչներն ասացին, որ անասնապահության տեսակետից՝ բացից փակ մոդելի են անցնելու, բայց այդ դեպքում էլ անասունների կերի, նոր մեթոդին վարժվելու խնդիր կա»,- նշել է նա:

Հիմնադրամի ներկայացուցիչը նաեւ նոր ծրագրերի համար տեղեկատվություն ստանալու նպատակ է հետապնդում:

«Որոշ շրջաններում ուսումնասիրել ենք խոզաբուծությամբ, մեղվաբուծությամբ զբաղվելու հնարավորությունները: Այս ծրագրերը դեռ պետք է բյուրեղացնենք, որպեսզի կարողանանք այնպես անել, որ առավելագույնս արդյունավետ լինի եւ շարունակական: Ուզում ենք, որ բնակիչները կարողանան հաջորդ տարիներին առանց բարեգործության այդ աշխատանքը շարունակել: Նաեւ այնպես պետք է անել, որ ոչ թե անհատական օժանդակություն լինի, այլ համայնքն օգտվի: Մենք այստեղ չենք մեկ անգամվա համար, մեր ծրագրերը երկարաժամկետ են»,- ասում է Փ. Դոստումյանը:

Նրա խոսքով՝ պետք է միասնաբար կասեցնել թշնամիների ծրագիրը, այն է՝ հայաթափել Արցախը: «Սփյուռքը պետք է թիկունք կանգնի Արցախին: Երբեմն մարդիկ ասում են՝ մի ընտանիքի օգնելով ինչ է փոխվելու, բայց ես այդպես չեմ մտածում, որովհետեւ այստեղ ապրող ամեն ընտանիք մեզ համար արդեն մեր հայրենիքի անվտանգության, գոյության հարցն է լուծում: Պետք է սփյուռքահայությունը չվախենա եւ բնակվի Արցախում, Արցախի ժողովրդի կողքին, որովհետեւ ուրիշ ձեւ չկա»,- կարծում է բարեգործական հիմնադրամի հանձնախմբի անդամը:

ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան շրջանի «Արցախ ֆոնդ»-ը նաեւ օժանդակել է ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակի «Վերելք» ծրագրին՝ առաջին փուլի համար հատկացնելով 30000 դոլար: Արցախ այցի ընթացքում Փոլին Դոստումյանը հանդիպել է ծրագրի շահառու երիտասարդների հետ: Նրա խոսքով՝ ծրագիրը կշարունակվի եւ թիկունք կկանգնեն Արցախում սեփական բիզնեսով զբաղվելու ցանկություն ունեցող երիտասարդներին:

ՀՅԴ ԱՄՆ Արեւելյան շրջանի «Արցախ ֆոնդ» հիմնադրամն Արցախում գործում էր նախքան պատերազմը, 44-օրյա պատերազմից հետո էլ շարունակել է իր գործունեությունը:

Հիմնադրամի վերջին ծրագրերից է Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգումը, Մարտունու, Ասկերանի եւ Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերի բնակիչներին հավի ճտեր հատկացնելու ծրագիրը:

Տ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

**Խմբագիր
Ա. Պուլուզյան**